ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 12. Պետական ուսումնական հաստատության տնօրենը, համակարգողը և նրանց իրավասությունները
(վերնագիրը խմբ. 09.02.22 ՀՕ-35-Ն)

1. Պետական ուսումնական հաստատության տնօրենին նշանակում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած կարգի պահանջներին համապատասխան:

2. Տնօրենի թափուր պաշտոնում կարող է նշանակվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (այսուհետ նաև՝ հավաստագիր) ստացած անձը:

3. ~~Հավաստագրի համար կարող է դիմել Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող այն անձը, որն ունի կրթության ոլորտի բարձրագույն կրթություն և վերջին 10 տարվա ընթացքում գիտամանկավարժական կամ մանկավարժական աշխատանքի կամ կրթության կառավարման ոլորտի առնվազն յոթ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ~~Հավաստագրի համար կարող է դիմել «Կրթության մասին» օրենքի 40 . 1-ին հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխանող անձը:

Հավաստագրի համար կարող է դիմել սույն հոդվածի 25-րդ մասով սահմանված սահմանափակումներ չունեցող անձը:

……